

ՍՈՒՏԻ ՀՈԳԵԲԱՆՈՒԹԻՒՆԸ

Ֆրանսիացի Կամիլ Մելիտանը մի փոքր բրոշիւր է հրատարակել անցեալ տարի ստի մասին, որի բովանդակութիւնը այնքան հետաքրքրական է, որ մեր ընթերցողներին կարծում ենք մի օգտաւէտ ընթերցանութեան նիւթ տուած կլինենք, եթէ պատմենք համառօտօրէն այս գրքոյկի միտքը: Նշանաւոր է այն հանգամանքը, որ այս գրքոյկը հեղինակը գրել է Ֆրանսիական պատգամաւորների ժողովի ընտրութիւններից մի փոքր առաջ, որի ժամանակ, ասում է հեղինակը, սուտը ամենաեռուն խնդիր է:

Առհասարակ, հեղինակի կարծիքով, սուտի հասցրած վնասն այնքան մեծ է, որ արժէ ուսումնասիրել այդ հարցը: Բազմաթիւ քաղաքական, հասարակական, դատաստանական և կենսական խնդիրներ, Մելիտանի կարծիքով, անլուծելի են դառնում սուտի տիրապետութեան պատճառով և Ֆրանսիայում վերջին տարիներում կատարուած բազմաթիւ չարիքները սուտից են առաջացել: Էմբերների անհաւատալի աւազակութիւնը, Դրէյֆուսի նշանաւորը դատը—բոլորը, ապում է հեղինակը, ստի ծնունդ են: Առհասարակ սուտը լաւիտենական նշանակութիւն ունի: Ամեն ժամանակ պատմաբանը, դատաւորը, դաստիարակը գործ են ունենում ստի հետ և կռւում նրա դէմ: Իրական վկայութիւնները կեղծ փաստերի հետ շփոթելուց դժուարանում է պատմաբանի գործը, դատաւորի գործը շատ անգամ անկարելի է դառնում մեղադրեալի, վկաների, դատողների և փաստաբանների ստախօսութիւնից:

Դաստիարակը առհասարակ համոզուած է, որ բարոյականութիւնը ամբողջապէս անքակտելի կերպով կապ ունի սկզբնական առաքինութեան հետ, որ է անկեղ-

Ժողովիւնը: Ստախօս երեխան աւելի է ընդունակ վատ
և անբարոյական գործեր անելու, որովհետեւ ստի մի-
ջոցաւ է նա ծածկում իւր վարմունքները: Առհասարակ
ամեն մարդ, որ չէ խորշում ստից, հազիւ թէ առիթը
եղած ժամանակ կարող է բարոյական անկումից խու-
սափել: Սուտը այսպիսով միշտ ստախօս մարդու ան-
բարոյականութեան հաստատ նշան է, որովհետեւ մար-
դը ստում է, ելբոր նրա վարմունքի մէջ ծածկելու
բան կայ, որ նա խոստովանել չի կարող: Անկեղծու-
թիւնը և սուտը առաքինութեան և արատի մի տեսակ
նշաններ և չափսն են և որքան մարդ ստախօս է—
այնքան նա անբարոյական է և ընդհակառակը:

Հասարակութեան գոյութեան գլխաւոր պայմաննե-
րից մէկն էլ այն հանգամանքն է, որ մարդիկ կարո-
ղանան միմեանց հաւատալ և այսպիսով պէտք է ըն-
դունել, որ հասարակութեան անդամները միմեանց
հետ մի լուելեայն դաշն ունին կապած միմեանց հետ
ուղիղ խօսելու, իսկ ստախօսութիւնը այն պայմանագ-
րի խախտումն է: Ծիշտ է, որ հասարակական զանա-
զան հանգամանքներ կան, որոնց շնորհիւ մարդիկ ստի-
պուած են լինում յայտնի չափով և սուտ խօսել, բայց
երբոր սուտը անցնում է այդ չափի սահմանից—նա
դառնում է հակահասարակական երևոյթ և միանգա-
մայն կորստաբեր հասարակութեան համար:

Այժմ քննենք այս ցաւալի արատի լատկութիւն-
ները, փորձենք հետազօտելու ստախօսի բարդ հոգեբա-
նութիւնը և տեսնենք թէ մանուկը կամ չափահաս
մարդը ինչպէս է ստախօս դառնում, ինչ շարժառիթ-
ներ նրան մղում են դէպի ստախօսութիւն, ինչ կեղծ
գաղափարութիւններով է նա կամենում իրան արգարաց-
նել և թէ ինչ գործնական միջոցներ կարելի է գոր-
ծադրել ստի դէմ: Պէտք է առհասարակ ընդունել, որ
մանուկը իւր հասակի առաջին տարիներում անպայման
անկեղծ է լինում և նա այդ ժամանակ չէ ստում և
չէ ծածկում ոչինչ, որովհետեւ նրա բոլոր ցանկութիւն-
ները և զգացմունքները անմիջապէս արտայայտում
են գործով, նա ամեն ցանկացածն ասում է և ամեն
զգացած բան արտայայտում: Սա հիմնական օրէնք է,

որ ամեն մի գաղափար, ամեն մի ցանկութիւն անմիջապէս պէտք է գործողութիւն դառնայ, եթէ կամքը չէ արգելում այս բանին: Կամքից զուրկ մարդկանց, գլխաւոր լատկութիւնն այն է, որ նրանք իրանց ցանկութիւնների և զգացմունքների գերի են, որպէս հիպնոտիկները և այլ այս տեսակ հիւանդները:

Մանուկը նոյնպէս սկզբում իւր ներքին աշխարհի պատճէնն է, նրա բոլոր գործողութիւններն անպայման կերպով անկեղծ են: Բայց ահա թէ ինչպէս մանուկը կամաց-կամաց ստախոս է դառնում. նախ մանուկը իմանում է, որ սուտ կալ աշխարհում և սկսում է ճանաչել սուտը ճշմարտութիւնից, յետոյ տեսնում է, որ սուտ խօսում են շատերը, որ սուտը կարեւոր է և օգտաւէտ և վերջապէս ինքն էլ սկսում է սովորել սուտ խօսել: Ստի հետ մանուկը ծանօթանում է սկզբում խաղի ժամանակ: Այսպիսով առաջին սուտը, որ երեխան իմանում է, դա մանկական խաղերից է առաջանում: Խաղալ, կնշանակէ ստեղծել, ապրել երեւակաւական աշխարհում, իրական առարկաների, խօսակցութիւնների տեղ դնել մտացածին բաներ: Սա արդէն սուտ է: Օրինակ. փոքրիկ աղջիկը տիկիւնների հետ խաղալիս ասում է, որ տիկիւնը իւր աղջիկն է, որ իւր երեխան հիւանդացել է, նրան պարկեցնում է, բժշկում է, հետք խօսում է և այլն: Պարզ է, որ այս հանգամանքը ստիչ շատ մօտենում է: Թէ խաղը և թէ սուտը իրականութեան հակառակ ելեւոյթներ են: Երկրորդ հանգամանքը, որ երեխային ստախոս է դարձնում—դա մեծերի օրինակն է, նամանաւանդ ծնողների: Մենք շատ անգամ մանր ստեր ենք ասում, տուանց մտածելու թէ որքան վնասակար է սա երեխաների համար: Օրինակ. երեխայի մօտ հրամայում ենք ծառային՝ ասելու հիւրին, որ տանը մարդ չկայ, երբոր մենք տանը նստած ենք, ծանօթներին շողոքորթում ենք երեխաների մօտ, իսկ գնալուց յետոյ նոյն երեխաների մօտ դատապարտում ու հայհոյում ենք նրանց և այլն և այլն: Շատ անգամ էլ մենք հէնց իրանց երեխաների հետ ենք սուտ խօսում, երբոր նրանք դիմում են մեզ զանազան հարցերով, որոնցից մենք կամենում ենք խուսափել:

Փոխանակ պատասխանելու թէ մենք չգիտենք կամ չենք կամենում ասել նրան հարցի պատասխանը՝ մենք շատ անգամ հնարում ենք մի սուտ և ասում։ Վերջապէս ամենից կորստաբեր դէպքը, որ երեխային ստախոս է դարձնում, այդ այն է, երբոր մենք երեխային մեր ստախոսութեան ընկեր ենք դարձնում, ինչպէս որ յաճախ անում են մայրերը։

—Այ, տես, որ հայրիկին չուես հա— ահա այն անբարոյական խրատը, որ շատ անգամ մայրերը տալիս են իրանց մանուկներին։

Սոսի զարգացման երրորդ շրջանը սկսում է այն օրից, երբ առաջին անգամ մանուկը շփուում է հասարակութեան հետ, ուր նա տեսնում է, որ սուտը ոչ միայն գործադրւում է, այլ և կարեւոր բան է համարւում. և իրօք, նախ երեխան կ'անք է մտնում կատարեալ անկեղծութեամբ, խօսում է այն. ինչ որ մտածում է և գործում է, ինչ որ զգում է, բայց շուտով համոզւում է, որ իւր սրտաբացութիւնը վնասակար է։ Նախ՝ նա շատ անախորժութիւններ է պատճառում իւր ծնողներին, պատմում է ուրիշներին ընտանիքի գաղտնիքները և ծնողները նրան ներշնչում են, որ այդչափ ուղղամտութիւնը և անկեղծութիւնը օգտաւէտ չէ։ Սրանով երեխային հասկացնում են, որ սուտը կարեւոր է։ Բացի այս՝ երեխան ծածկամտութեան սովորում է և իւր հասակակիցների հետ շփուելիս, որովհետեւ երբ որ անկեղծօրէն պատմում է և խօսում է իւր ցանկութիւններէ, ուրախութիւնից և թրտմութիւնից՝ նրան սկսում են ծաղրել։ Գիշերօթիկ ուսումնարաններում երեխաներն աւելի են ընտելանում ստին և ծածկամտութեանը, ուր անկեղծ երեխաները շատ անգամ տուժում են վատ ընկերներից և այստեղ երեխան համոզւում է, որ իւր անկեղծութիւնը դառն հետեւանքներ է բերել իւր գլխին։ Նւ առդարեւ հասարակութիւնը պահանջում է յայտնի չափով սուտ և ծածկամտութիւն։ Քաղաքավարութիւնը, օրինակ, մի յայտնի անասկ սուտ է, որովհետեւ պահանջում է, որ մենք անպայման անկեղծ չլինենք։ Շատ անգամ մենք գրտնում ենք մեր ծանօթների բնաւորութեան մէջ մեծ

պակասութիւններ, բայց անքաղաքավարութիւն է ամեն բան մարդու երեսին ասելը: Այսպիսով մենք քաղաքավարութիւնը գերադասում ենք հակահասարակական անկեղծութեանը: Շատ անգամ էլ արտաքին համեստութիւնը մեզ ստիպում է ստել, որովհետեւ մարդս ունի այնպիսի յատկութիւններ, որպէս անձնական զգացմունքներ, որոնք առանց դիմացիին վիրաւորելու կամ անախորժութիւն պատճառելու՝ չի կարելի արտայայտել: Մենք, ուրեմն, չենք կարող երևալ այնպէս, ինչպէս որ կանք, եթէ կամենում ենք ապրել ներկայ հասարակութեան մէջ: Առհասարակ կեանքը զոհողութիւն է պահանջում և բոլոր խնդիրը նրանումն է, թէ որքան մեծ պիտի լինի զոհողութեան չափը: Պէտք է աշխատել, որ մանուկը չընտելանայ ստին աւելի, քան թէ պահանջում է հասարակական կեանքը և չսովորէ սուտ խօսել ամեն անգամ, երբոր իւր անձնական օգուտն է պահանջում և չդառնալ սովորական խաբեքայ:

Այժմ տեսնենք թէ ինչպէս է երեխան ստախօս դառնում: Մինչև այժմ նա ստախօս չէր, նա միայն իմացել էր, որ սուտ կայ կեանքում, որ սուտ խօսում են իրանից մեծերը և մինչև անգամ իւր ծնօղները, որ ստախօսը վերջապէս բոլորովին մի առանձին վնաս չէ տեսնում և որ սուտը կարևոր է մինչև անգամ: Երեխայի ստախօս դառնալու գլխաւոր պատճառներից մէկը պատժի—անտեղի և անպատշաճ գործադրութիւնն է: Եթէ երեխան ստախօս է դառնում՝ կնշանակէ, որ նրան յաճախակի և խիստ կերպով պատժել են ծնօղները կամ դաստիարակները և որ նա շատ անգամ նկատողութիւն է ստացել, ծեծ կերել և մշտական ահ ու դողի մէջ է եղել: Խաբեքայութիւնն և սուտը այս դէպքում վերջին միջոցն է նրա համար պատժից ազատուելու, որովհետեւ նա գիտէ, որ եթէ իւր արածը խոստովանի՝ պիտի պատժուի: Այս տեսակ թշուառ երեխաները շատ անգամ ճշմարտախօս են լինում ի բնէ, բայց սուտ են ասում միմիայն նրանց, որոնք պատժում են: Շատ անգամ էլ երեխաները սուտ են ասում միմիայն մօրը կամ հօրը, իսկ միւսներին երբէք: Ստի մտեանշանաւոր պատճառներից մէկն էլ լինում են երեխա-

յի անկանոն կամ սխալ վարմունքները: Երբոր երեխան սովորում է ծնողներին չլսել և մի շարք փոքր թե մեծ լանցանքներ գործել — այսպիսի երեխան աւելի շուտ ստախոս է դառնում: Նա հետզհետե կորցնում է իւր անկեղծութիւնը, քաջութիւն չի ունենում ամեն անգամ խոստովանելու իւր արարքները և նկատուութիւններ ստանալ և իւր լանցանքները ծածկելու պատժից ազատուելու համար սկսում է ստել: Այս միտքը ուղիղ է և ոչ միայն երեխաների, այլ և չափահասների վերաբերմամբ ևս: Երբոր մէկը կորցնում է հաւասարակշռութիւնը, երբոր նա սկսում է այցելել այնպիսի տեղեր, ուր չպիտի գնար, երբոր նա գործում է անվայել բաներ — նա արդէն պարտաւորուած է լինում խաբել և սուտը դառնում է անխուսափելի: Այսպիսի մարդը թերեւս սկզբներում դեռ քաջութիւն կունենայ ճշմարտութիւնը չծածկելու, բայց երբոր նրա լանցանքները շատանում են, զանազան պատճառներից դժբախտաբար, նախ ծանր խոստովանութիւնից ազատուելու համար, ապա իւր մեծաւորներին դառնութիւն չպատճառելու կամ նրանց չվիրաւորելու համար նա սովորում է ծածկել իւր վարմունքները: Այստեղ պէտք է հին ասածը, թէ՛ սուտը լանցանքների մայրն է, ուղղել և ասել, որ լանցանքը շատ անգամ սուտ է առաջ բերում, որ սովորական անբարոյականութիւնը սովորական ստի պատճառ է դառնում: Մարդ սկսում է ստել այն օրից, երբոր չի կարող իւր բոլոր արարքները բացարձակ ասել և նա առաքինի մարդու անունը գոնէ պահելու համար ստում է, թէ և իսկական առաքինութիւնը արդէն կորցրել է:

Ահա սրանք են այն գլխաւոր պատճառները, որոնք երեխային կամ չափահաս մարդուն ստախոս են դարձնում: Սուտ ասելու սովորութիւնը հետզհետե զարգանում է մարդու մէջ և նա բոլորովին ընտելանում է այս լանցանքին, որ առաջ գուցէ և նրա համար հրեշաւոր և ծանր բան էր: Մի կողմից ստախոսը աւելի ճարպիկանում է ստախոսութեան մէջ, որպէս զէնքի հետ գործ ունեցողը և զէնք գործածողը հետզհետե տիրապետում է զէնք գործածելու արուես-

տին, իսկ միւս կողմից նա կորցնում է ստից զգուելու և խորշելու ընդունակութիւնը:

Սկզբում սուտ ասելու մասին մտածելն անգամ սարսափելի է լինում և առաջին սուտը խղճի խայթոցներ է ստեղծում, իսկ կամաց-կամաց ստից զգուելու զգացմունքը բթանում է, մարդ սովորում է սուտ ասել և ընտելանում նրան: Կան մարդիկ, թէև սակաւաթիւ, որոնք սուտ ասում են ըստ սովորութեան, միմիայն սուտ ասած լինելու համար: Այսպէս է մարդ սկզբնական ճշմարտասիրութիւնից անցնում ստախոսութեան: Բայց պէտք է նկատել, որ կան ստելու տրամադրող հանգամանքներ, որոնցից երկուսը պէտք է դիտել: Նախ վառ երեւակայութիւնը և երկրորդ սրտի յայտնի սառնութիւնը: Վառ և բեղմնաւոր երեւակայութեան տէր մարդը հեշտ է կարողանում հնարել և ստեղծել սրամիտ և ճշմարտանման դրութիւններ և ցնորքներ, որից առաջանում է սուտը ճշմարտի տեղ ներկայացնելու ցանկութիւն: Անտարբեր և խստասիրտ մարդիկ էլ հետեւել պատճառով են դառնում ստախոս: Կեանքում շատ անգամ պատահում է դժբաղտութիւն և մարդիկ առհասարակ համակրութեան զգացմունք են արտայայտում դժբաղտներին: Խստասիրտ մարդը այսպիսի դէպքերում, որ իրօք ոչինչ չէ զգում, ըստ սովորութեան արտաքուստ համակրութիւն է ցոյց տալիս, այսինքն կեղծում է իւր զգացմունքները և հետզհետէ նա դառնում է ստախոս:

Սուտը յաճախակի կերպով առաջանում է, երբ մարդ իւր անուղիղ վարմունքին կամենում է բարոյական ձև տալ: Սուտը մի դիմակ է, որ մենք հագնում ենք այն օրից, երբոր այլ ևս չենք կարող երևալ այնպէս, ինչպէս որ կանք, երբոր այլ ևս մեր վարմունքները խոստովանել չենք կարող: Սուտը բարոյականութեան չափսն է. բաւական է ճանաչել, որ այս ինչ մարդը ստախոս է, համոզուելու համար, որ նա ազնիւ մարդ չէ՝ բաւիս կատարեալ մտքով:

II.

Մենք արդէն իմացանք, թէ ինչպէս երեսան և յետոյ չափահաս մարդը ստախօս է դառնում: Քննենք այժմ նրա գործ դրած միջոցները և ձևերը և նրա ստախօսութեան շարժառիթները: Ստել, կնշանակէ իրական փաստերը փոխարինել ստախօսի համար օգտաւէտ մի հնարած փաստով և իրօք կատարուածի տեղ դնել ստախօսին ցանկալի մտացածին փաստեր: Իսկական փաստերի և իրողութիւնների ստով փոխարինելը լինում է զանազան տեսակ: Նախ կայ այնպիսի սուտ, որ բոլորովին հնարած փաստերից է բաղկացած: Օրինակ, մարդը չի գնում խոստացած ժամին և արգարանում է ասելով թէ՝ մի աւելի կարևոր գործով ուրիշ տեղ էր գնացել, թէև նա տանից դուրս էլ չէր եկել: Այսպիսի կատարեալ ստերը շատ անգամ են բռնւում մի ամենաչնչին դիպուածով: Աւելի յաճախ է պատահում անկատար սուտ կամ ճշմարտութեան աղաւաղումը: Այս տեսակ ստախօսը միմիայն ճշմարտութիւնը լեղաշրջում է ըստ իւր կամքի:

Ճշմարտութիւնը աղաւաղելու երեք գլխաւոր միջոցներ կան: Ճշմարտութեան մի մասը գաղելը, չափազանցացնելը և կամ իրողութեանը ուրիշ գոյն տալը: Ճշմարտութեան մի մասը գաղելը ամենից շատ է պատահում, երբ մարդ պատմութեան մէջ իրեն համար անպատուաբեր կամ անախորժ կտորները ծածկում է: Այս տեսակ սուտ շատ յաճախ է պատահում, որովհետև ստախօսը նախ մտածում է, որ ոչինչ չի հնարել և երկրորդ որովհետև սուտը բացուելու դէպքում՝ նա միշտ կարող է ասել, որ մոռացել է: Նոյնպէս սուտը յաճախ տեղի է ունենում չափազանցութիւնների միջոցաւ: Չափազանցել, կնշանակի պատմել եղածից կամ լսածից աւելի: Այսպէս օրինակ, չափազանցեցնում է նա, ով մի որևէ դժբաղդ դէպքը արհաւիրք է լինում, մի փոքր փաստը ահագին դէպք է դարձնում, կարճ ժամանակը երկարացնում է և ընդհակառակը: Մարդ չափազանցեցնում է, որպէս զի աւելի մեծ տպաւորութիւն գործէ և այս տեսակ մարդիկ շատ կան: Փրան-

սխալում մինչև անգամ ամբողջ գաւառներ կան, որոնք յալտնի են իրենց բնակիչների չափազանցեցնող բնաւորութեամբ: Կանանց մէջ աւելի շատ են պատահում այսպիսի տիպեր: Սոի ամենասովորական տեսակը կատարւում է եղած փաստի գոյնը փոխելով կամ իրողութեանը այլ բնաւորութիւն վերագրելով: Մի որևէ վիճաբանութեան մասին խօսելիս այս տեսակ ստախօսը, օրինակ, ասում է թէ ինքը շատ սրամիտ պատասխան տուեց, թէև իրօք ոչ մի սրամիտ խօսք էլ չէր ասել կամ պատմութեան մէջ բաց է թողնում իւր ասած իմարութիւնները, որ յետոյ հասկացել է և այլն և այլն: Այս տեսակ սոի վնասակարութիւնը նրանումն է, որ այսպիսի ստախօսները շատ անգամ իրենք էլ են սկսում հաւատալ իրենց ստերին և նրանց համար սուտը դառնում է մի տեսակ բանաստեղծական արուեստ:

III.

Հետաքրքրական է թէ ինչ պատճառներ են դրդում մարդուն դէպի սուտը: Առանց պատճառի կամ շարժառիթի ոչինչ չէ կատարւում և շատ քիչ կլինի որևէ ստախօս, որ սուտը ասի միմիայն սուտ ասելու համար: Այս տեսակ մարդիկ առհասարակ հազուագիւտ են, որովհետև ամենօրեայ ստախօսն էլ առանց որևէ շարժառիթի գերադասում է ուղիղը խօսել: Սուտ խօսելու գլխաւոր դրդիչ պատճառներից կամ շարժառիթներից մէկը համարեա միշտ կիրքն է: Երբոր մենք բռնուած ենք մի որևէ կրքով, երբոր մենք կիրք ունինք դէպի մի անձնաւորութիւն կամ դէպի մի որևէ բան՝ մենք ամեն միջոց գործ ենք դնում նպատակին հասնելու, ուստի և շատ անգամ սուտը այդ միջոցներից մէկն է լինում: Երբոր մարդ գիտէ, որ սուտը օգնում է նրան շուտ ցանկացած նպատակին հասնելու՝ այլ ևս չէ դիմանում փորձութեան: Այս պատճառով ամեն մի կիրք բազմաթիւ ստերի ծնունդ է տալիս:

Կրքերից՝ առեւութիւնը ամենից գորեղն է, որ մարդուն ներշնչում է սուտ խօսել: Հակառակորդին կամ թշնամուն ստորացնելու համար մարդ շատ հնարագէտ

է դառնում: Մէկ կողմից ատելութիւնը ուժեղ կերպով զբաղում է մարդու երեւակայութիւնը և հնարել է տալիս ամենանուրբ զրպարտութիւն թշնամու դէմ, իսկ միւս կողմից ստիպում է մեզ օգտուել այդ զրպարտութիւնից: Ատելութիւնը շատ անգամ ստեղծել է տալիս հանճարեղ ստեր: Սէրը նոյնպէս անթիւ անհամար սրտեր է ծնեցնում և տարածում: Ով սիրում է—նա շատ անգամ սուտ է խօսում իւր նշանակութիւնը մեծացնելու համար, շատ անգամ էլ հակառակորդին նրանմանելու նպատակով կամ սիրած մարդուն զբաղելու ևսլն նպատակներով:

Սի շատ բարդ և զօրեղագոյն կիրք, որ կուսակցական կիրք է անուանւում, նոյնպէս և ամեն տեսակ ստերի անսպառելի աղբիւր է: Կուսակցական կողմերը իրենց սեփական շահերը ճշմարտութիւնից բարձր են դասում և սոսկալի ստեր են հնարում միմեանց դէմ¹⁾ և մենք ամեն օր ականատես ենք մի սարսափելի իրողութեան: Հրապարակախօսները և քննադատները մի չափսով են միմիայն չափում մարդուն կամ նոցա գրուածքը. թէ արդեօք որ կուսակցութեան է պատկանում քննելին (այս բանը քաւ լիցի թէ հայերիս մէջ կայ):

Միւս բոլոր կրքերն էլ սուտ են ստեղծում: Փողասիրութիւնը և շահը առևտրական բազմաձև և բազմաթիւ ստերի պատճառ են լինում, որոնցից ուշադրութեան արժանի է սեփական ապրանքի կամ գործի սուտ գովասանքը, բէկլամը: Իշխելու կիրքը, փոքրօգութիւնը և փառամոլութիւնը նոյնպէս շատ ստերի շարժառիթ են դառնում: Փառամոլութիւնից ստիպուած շատերը ստում են, իրեն արժէքը ունկնդրի առաջ բարձրացնելու համար: Մեր թուլութիւնները, յիմարութիւնները, տգիտութիւնը ծածկելու համար նոյնպէս յաճախ մենք սուտ ենք խօսում: Ստի այն տեսակը, որ չափազանցումն է անուանւում՝ ամբողջապէս փառամոլութեան արգասիք է: Մարդիկ չափազանցնում են (զգոհացնում են) մի բան) ըստ մեծիմասին ուշադրու-

¹⁾ Կարծես ֆրանսիացի հեղինակը հէնց էսօր հայերիս մէջ է ապրում և գիտէ մեր պսօրուայ իրողութիւնները:

Թիւն գրաւելու, ունչնդիրներին զարմացնելու և ուրիշներին աւելի մեծ տպաւորութիւն գործելու համար: Փառամոլութեան հետ սերտ կերպով կապուած է այսպէս ասած գեղարուեստական սուտը: Կան մարդիկ, որոնք մի նկարագրութիւն անելիս պահանջ են դրում իրենց պատմածին բանաստեղծական կամ գրամատիքական գոյն տալու առանց որևէ գործնական նպատակի, ուստի և նրանք ճշմարտութիւնը աղաւաղում են, կռկում են, զարդարում են՝ մի խօսքով ստում են: Բարձրագոյն ստեր էլ հնարում են սրամիտ երևալու համար: Այս տեսակ ստերի կարգին են վերաբերում և գիտնական ստերը, երբ գիտնականը հետազօտած և վաւերացրած այն փաստերը գաղում է, որոնք հակասում են իւր տեսութեան և ոչնչացնում նրա փառքը: Կա և աւելի ստոր տեսակ սուտ, երբ մարդ իրեն աւելի մեծ նշանակութիւն տալու համար ձեւանում է իբրև շատ տեղեկութիւն ունեցող և խորհրդաւոր կերպով պատմում է զանազան ընկերութիւնների ծրագիրներ և նորութիւններ:— Սակայն ստի ամենասովորական և մըշտական շարժառիթը՝ փոքրագրութիւնը և վախկոտութիւնն է: Մենք շատ անգամ ստում ենք միայն նրա համար, որ քաջութիւն չենք ունենում մեր իսկական դէմքով երևալու և վախենում ենք մեր վարմունքների բնական հետեանքից: Երեխան գիտէ, որ պիտի պատժուի, եթէ ճշմարիտը խօսի, ուստի և խաբում է, կինը գիտէ, որ ամուսինը պիտի բարկանայ, եթէ նա չծածկէ իրողութիւնը, ամուսինը գիտէ, որ կինը պիտի մի ահագին փոթորիկ ստեղծի, եթէ իմանայ իւր կատարածը, այս պատճառով ստում են երկուսն էլ: Երկիւղն է ուրեմն, որ ծնում է ստերի մի ամբողջ շարք, որովհետև մի սուտը պաշտպանելու համար մենք հնարում ենք մի ուրիշը և չենք կարողանում իւր ժամանակին խոստովանելու ճշմարտութիւնը:

IV

Թէև մարդիկ ստախօս լինում են և շատ անգամ մեծ ախորժակով են սուտ խօսում, բայց միշտ ամեն

մի ստախօս աշխատում է արդարացնել իւր սուտը և ինքն իւր համար հիմունքներ է ստեղծում: Տեսնենք թէ որոնք այն սխալ արդարացուցիչ հիմունքները, որոց օգնութեան առհասարակ դիմում են ստախօսները: Ստախօսների արդարացուցիչ պատճառաբանութիւններէրից ամենից սովորականը լինում է հետեւեալ առարկութիւնը.

— Ես ոչ ոքի վնաս չեմ տալիս — ասում է ստախօսը:

Սի խօսքով ստախօսը հիմնում է իրեն արդարացնելու միջոցը այն դատուութեան վերայ, թէ նա ուրիշին վնաս չէ տալիս, իսկ իրեն օգուտ է բերում: Օրինակ ստախօսը իւր արժանաւորութիւնը բորձրացնելու համար պատմում է, թէ այս ինչ կամ այն ինչ մարդուն մենամարտութեան կանչեց, բայց նրանք վախեցան իրանից և այս տեսակ սուտ սխրագործութիւններ է վերագրում իրեն, բայց որովհետեւ սրանով ոչ ոքի վնաս չէ տալիս, ուստի այս տեսակ ստախօսը իրեն մեղաւոր չէ զգում: Ի՞նչ խօսք, որ այս արդարացումը սխալ է և անհիմն:

Նախ երբոր ես սուտ եմ ասում, դէպի ինձ լսողը կամ խօսակիցը, որ ինձ հետ ուղիղ է խօսում, ես իմ պարտքը չեմ կատարում՝ նրան նույնպէս ուղիղը ասելու, այսինքն ես նրան մի բան պարտական եմ մնում, երկրորդ իմ սուտը կարող է բացուել և ես ինձ վնաս կարող եմ տալ և երրորդ իմ խօսեցած առաջին սուտը կարող է առիթ լինել ինձ համար մի ուրիշ աւելի վնասակար սուտ ասելու: Ահա մի ուրիշ սուտ հիմունք, որ գործ են դնում ստախօսները: Շատ անգամ ասում են, որ ստում են ուրիշի օգտի համար, ուրիշին սխալ քայլից ազատելու դիտմամբ: Օրինակ. եթէ մեր մի ծանօթը կամենում է հեռանալ հայրենիքից և մենք նրա վարմունքը վնասակար համարելով նրա համար՝ սուտ տեղեկութիւններ ենք տալիս այն երկրի մասին, ուր նա կամենում է գնալ: Բայց սրանով նախ՝ զրկում ենք նրան ուղիղ տեղեկութիւններից, որոնք գուցէ աւելի օգտաւէտ կլինէին և երկրորդ՝ մենք ուրիշին ստիպում ենք դործելու ոչ այնպէս, ինչպէս նա կամենում է,

այլ որպէս մենք ենք մտածում: Չատ անգամ մարդիկ ստում են իւր թէ ուրիշին դառնութիւն չպատճառելու համար, օրինակ՝ երբոր մի հեղինակ հարցնում է մէկի կարծիքը և վերջինս չկամենալով վշտացնել ծանօթին՝ սուտ գովասանքներ է անում նրան: Սակայն այս պատճառն է: անհիմն է և անբարոյական: Նախ՝ որովհետև այսպիսի դէպքերում ստախօսը աւելի մտածում է իւր մասին և սուտ գովասանք է անում մի աւելորդ թշնամի շտեղծելու համար և երկրորդ՝ սուտ գովասանքները մեծամեծ վնասներ են հասցնում և փչացնում մարդկանց: Միմիայն նա, ով անտարբեր է և խստասիրտ, եսասէր դէպի ուրիշներն և հասարակական շահերը, կարող է այսպէս վարուել: Սակայն կեանքում անպայման ոչինչ գոյութիւն չունի, ուստի և լինում են աշխարհում ներքի ստեր: Օրինակ, երբոր մայրը խաբում է աւագակներին որդու կեանքը ազատելու համար, բժիշկները շատ անգամ խաբում են իրանց հիւանդներին չլուսահատեցնելու համար և այլն: Այս այն տեսակ ստեր են, որոնք իրօք անձնական և եեական օգտի համար չեն տեղի ունենում և ոչ էլ յանցանքից բըղխած ստեր: Իսկ մենք խօսում ենք յանցաւոր ստերի մասին:

V

Այն մտքերի գործնական հետեանքները, որ մենք այստեղ արծարծեցինք, հետեւեալներն են: Նախ՝ մենք տեսանք, որ սուտը անբարոյականութեան նշան է, որովհետև ծագում է մեր այնպիսի վարմունքների և զգացմունքների ծածկելու ձգտումից, որ մենք վախենում ենք ասել, երկրորդ՝ որ սուտը ստոր շարժառիթներից — փոքրօգութիւնից է առաջանում և ստախօսը արդարացնում է իրեն կեղծաւոր և սխալ պատճառաբանութիւններով: Ստի հետեանքներն առհասարակ կորստաբեր են: Սուտը զարգացնում է և մարդու վատ հակումները և տանում դէպի բարոյական կատարեալ անկումն, որովհետև ստախօսը կորցնում է ուրիշներից ամաչելու թակագին յատկութիւնը. և ընդհակառակը

որքան գեղեցիկ բան է բարձր անկեղծութիւնը և ճշմարտասիրութիւնը։ Կան մարդիկ և կանայք, թէև շատ սակաւ, որոնք նոյն իսկ քողաքավարութեան համար չեն ստում և չեն ասում այն, ինչ որ չեն մտածում։ Թերևս այս յատկութիւնը ոչ այնքան օգտաւէտ և փայլուն, բայց անպայման ամենահիմնաւոր և ամենաազնիւ առաքինութիւնն է։

Արդեօք չի կարելի սուտը պակասեցնել կեանքում և որպէս պէտք է ջոկել ստախօս մարդուն անկեղծ և արդարասէր մարդուց։ Հազիւ թէ դեռ երկար ժամանակ կարելի լինի սուտը աշխարհից ոչնչացնելու մասին մտածել։ Ստի հետ կռուելու հարցը նախ կրթութեան և դաստիարակութեան նշանաւոր խնդիրներէց մէկն է։ Ստի հետ կռուելու առաքելութեան առաջին պաշտօնը պիտի կատարեն ծնողները և դաստիարակները։ Հարկաւոր է, որ նախ նրանք իրենք լաւ ըմբռնեն և հասկանան ստի հետ կռուելու կարևորութիւնը, որ սուտը չհամարեն փոքր լանցանք, որ իրենք օրինակ չտան ստախօսութեան, որ աւելի խիստ լինեն դէպի ստախօսութիւնը քան միւս լանցանքները, որ նրանք աւելի վարձատրեն անկեղծութիւնը և վերջապէս աշխատեն ներշնչելու երեխաներին այն պարզ միտքը, թէ կեանքի բոլոր բարոյականութիւնը ուղղամտութեան և անկեղծութեան մէջ է պարունակուում։ Ստախօսներին ճշմարտասէր մարդուց ջոկելու և ճանաչելու խնդիրը աւելի դժուար գործնական խնդիր է, որովհետև նախ՝ իսկական անկեղծութիւն շատ քիչ կայ և երկրորդ՝ շատ ստախօսներ այնպէս ճարպիկ կերպով են ստում, որ շատ անգամ զարմանալի անկեղծութեան ձև են տալիս իրենց ստերին։ Սակայն մի քանի նշաններ կան, որոնցով կարելի է ջոկել այդ տեսակ մարդկանց։ Իսկական անկեղծութիւնը երկու հաստատ նշան ունի. նախ՝ անկեղծ մարդը չի քաշուում իւր անկեղծութեամբ թէկուզ ուրիշին վշտացնելուց և երկրորդ՝ քաջութիւն է ունենում միշտ անկեղծօրէն ճանաչելու և խոստովանելու իւր սխալները։ Եթէ մարդ չի քաշուում իւր լանցանքները գիտակցօրէն խոստովանելու՝ նա անկեղծ մարդ է։

Կան ի հարկէ փչացած մարդիկ, որոնք իրենց լանցանքները չեն ծածկում, բայց այս տեսակները չեն ունենում իրենց արածի վատութեան գիտակցութիւն։ Իսկ ստախօսը շատ անգամ մատնում է իրեն խօսակցութեան ձևի, տոնի կեղծիքով, թէև փորձուած մարդը կարող է տոնի կեղծութիւնը ճանաչել։ Երեխաների մէջ ստախօսները շատ անգամ ինքնավստահ են լինում, թէև նկատուում է միշտ, որ նրանց պատմածը շատ միատեսակ է և սերտած դասի տպաւորութիւն է գործում։ Պէտք է քիչ հաւատալ նոյնպէս այն մարդկանց, որոնք շատ են խօսում իրենց անկեղծութեան և ուղղամտութեան մասին, մանաւանդ, որոնք շատ արագ են խօսում։ Այս տեսակ մարդիկ ասում են, ինչ որ գալիս է իրենց գլուխը և եթէ սուտ է գալիս՝ նրանք սուտ են ասում։ Այս տեսակ մարդիկ առանց մտածելու խօսող մարդիկ են։ Ստախօսներ լինում են և շատ համեստ ձևացող մարդկանց մէջ և մանաւանդ շատ ստախօսներ են լինում չափազանց քաղաքավարի մարդիկ։

Վերջացնելով պ. Մելիտանի գրքուկի բովանդակութեան համառօտ քաղուածքը՝ աւելորդ չենք համարում նկատելու, որ անհամար են այն չարիքները, որոնք առաջանում են կեանքում հասարակական գործիչների, դաստիարակների, դատաւորների, գրագէտների, հոգևորականների, բարձր պաշտօնեաների ստախօսութիւնից, որովհետև մասնաւոր մարդկանց տուած վնասները այնքան կորստաբեր և այնքան քալքայիչ չեն կարող լինել, որքան այն մարդու հասցրած չարիքները, որ ինքը պարտաւոր է հոգալ շատ մարդկանց կարիքը և մտածել հասարակական շահերի համար։

ԳԱՐ. ԵՆԳ.